


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականին (տարեկան վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2000 թվականից անշարժ գույքի քաղաքացիական շրջանառության գործընթացի ակտիվացման վրա շարունակում են էական ազդեցություն ունենալ հանրապետությունում.

- քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի իրականացումը,
- օրենսդրական դաշտի կատարելագործումը,
- գործարքների իրականացման ծառայությունների ժամկետների կրճատումը,
- գործավարության և գրանցման փաստաթղթերի պարզեցումը,
- ՀՀ հողային օրենսգրքից բխող նորմատիվ իրավական ակտերի ընդունումը,
- ինքնակամ կառույցների օրինականացումը,
- անշարժ գույքի շուկայի մասնակիցներից՝ ռիելթորների, անշարժ գույքի գնահատողների, տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքներ իրականացնողների լիցենզավորման գործընթացի իրականացումը:


2006-2016 թվականների կտրվածքով, հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն ունեն հետևյալ տեսքը.



2016 թվականին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը՝ 173568 միավոր, 2015 թվականի համեմատ նվազել է 4.1 %-ով կամ 7376 միավորով, այդ թվում Երևանում՝ աճել 1.2 %-ով կամ 754 միավորով, իսկ մարզերում՝ նվազել 6.8 %-ով կամ 8130 միավորով:

2015-2016 թվականներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժընթացներն ու միտումներն ունեն հետևյալ տեսքը.


Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկաների համադրումը




	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
—■— 2016թ.	9715	13333	15303	14951	14658	14823	14032	15029	14262	14787	15018	17657
-▲- 2015թ.	8991	12049	15269	15718	15400	16121	16277	15022	15511	16060	15945	18581

2016 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ընդհանուր քանակի 29.0 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Գործարքների ընդհանուր քանակի 36.3 %-ը գրանցվել է Երևան քաղաքում: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում մեծ տեսակարար կշիռ ունեն օտարման գործարքները՝ 26.9 %:

2016 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 46757 օտարման գործարքների 72.2 %-ը կազմել է առուվաճառքը, 27.2 %-ը՝ նվիրատվությունը և 0.6 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների 37.6 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.6 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2015 թվականի համեմատ, նվազել է 6.5 %-ով:

2016 թվականին Երևան քաղաքում անշարժ գույքի 12578 առուվաճառքի գործարքի 65.1 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2015 թվականի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.0 %-ով:

2016 թվականին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	2015թ	2016թ
Կենտրոն	428000	428100
Արաբկիր	356600	357200
Քանաքեռ-Զեյթուն	282700	283100
Նոր Նորք	253300	254200
Ավան	260700	261700
Էրեբունի	252000	252400
Շենգավիթ	257150	257700
Դավթաշեն	275900	276800
Աջափնյակ	250100	251000
Մալաթիա-Սեբաստիա	243300	244100
Նուբարաշեն	156750	157400
Միջինը Երևանում	274200	274900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2015 թվականի համեմատ աճել են 0.3 %-ով:

2016 թվականին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 3761 բնակարան, որոնց քանակը, 2015 թվականի համեմատ նվազել է 4.8 %-ով:

2016 թվականին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		2015թ	2016թ
Արագածոտն	Աշտարակ	116000	116100
	Ապարան	57800	58500
	Թալին	66100	66800
Արարատ	Արտաշատ	97900	98900
	Մասիս	115800	115800
	Վեդի	101300	101700
	Արարատ	76500	77500
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200
	Արմավիր	121200	121200
	Մեծամոր	87500	87600
Գեղարքունիք	Սևան	99300	99400
	Գավառ	60100	60600
	Մարտունի	107700	107700
	Վարդենիս	44900	45300
	Ճամբարակ	28700	28800
Լոռի	Վանաձոր	88500	88600
	Ստեփանավան	74600	74800
	Սպիտակ	99800	99900
	Ալավերդի	55300	55800
	Տաշիր	47300	47400
	Թումանյան	11000	11000
	Շամլուղ	8000	8000
	Ախթալա	20400	20500
Կոտայք	Աբովյան	155100	155100
	Նոր Հաճն	128550	128550
	Բյուրեղավան	108200	108200
	Եղվարդ	109400	109900
	Հրազդան	63800	63900
	Ծաղկաձոր	292400	292400
	Չարենցավան	85500	85500
Շիրակ	Գյումրի	109200	109400
	Արթիկ	66800	67300
	Մարալիկ	40800	41100
Սյունիք	Գորիս	123000	123800
	Կապան	94000	95200
	Սիսիան	91900	92200
	Մեղրի	82000	83100
	Ագարակ	47300	47700
	Քաջարան	94600	94900
	Դաստակերտ	8000	8000

Վայոց ձոր	Վայք	95000	95100
	Եղեգնաձոր	125600	126300
	Ջերմուկ	112900	113200
Տավուշ	Դիլիջան	114300	115500
	Իջևան	118400	118600
	Բերդ	60250	60500
	Նոյեմբերյան	50000	50400
	Այրում	31850	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2016 թվականին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի համեմատ աճել են 0.3%-ով:

2016 թվականին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 4238 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 1231, մարզերում՝ 3007: 2015 թվականի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 3.0 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 7.7 %-ով, իսկ մարզերում՝ 0.9 %-ով :

2016 թվականին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Վարչական շրջաններ	Միջին գները(դրամ)	
	2015թ	2016թ
Կենտրոն	476100	476200
Արաբկիր	383000	383100
Քանաքեռ-Զեյթուն	295000	295100
Նորք-Մարաշ	319200	319300
Ավան	270500	270600
Էրեբունի	239750	239800
Շենգավիթ	255000	255000
Դավթաշեն	276000	276100
Աջափնյակ	250050	250100
Մալաթիա-Սեբաստիա	238000	238100
Նուբարաշեն	150800	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականին անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի համեմատ, մնացել են անփոփոխ:

2016 թվականին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		2015թ	2016թ
Արագածոտն	Աշտարակ	136200	136200
	Ապարան	60050	60050
	Թալին	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100100
	Մասիս	115100	115100
	Վեդի	102300	102300
	Արարատ	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100
	Արմավիր	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94850	95950
	Գավառ	57100	57100
	Մարտունի	96100	96200
	Վարդենիս	41000	41100
	Ճամբարակ	31100	31100
Լոռի	Վանաձոր	100400	100900
	Ստեփանավան	90600	91200
	Սպիտակ	114000	114000
	Ալավերդի	50200	50300
	Տաշիր	51900	51900
	Թումանյան	12000	12000
	Շամլուղ	14000	14000
	Ախթալա	30000	30000
Կոտայք	Արուսյան	157100	157300
	Նոր Հաճն	129800	129800
	Բյուրեղական	120500	120500
	Եղվարդ	116100	116100
	Հրազդան	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000
	Չարենցավան	83000	83000
Շիրակ	Գյումրի	118900	119300
	Արթիկ	63200	63400
	Մարալիկ	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000
	Կապան	100300	100700
	Սիսիան	96500	96500
	Մեղրի	84500	84600
	Ագարակ	46900	46900
	Դաստակերտ	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90100	90150
	Եղեգնաձոր	116650	116750
	Ջերմուկ	131300	131300
Տավուշ	Դիլիջան	114300	115600
	Իջևան	123200	123200
	Բերդ	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300
	Այրում	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական

բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գինը (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի համեմատ աճել են 0.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականին հանրապետությունում օտարվել է 16530 միավոր /8197.93 հա/ հող, որից Երևանում՝ 1040 միավոր /107.32 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 9802 միավոր /7483.39 հա/, որից Երևանում՝ 57 միավոր (14.73 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 4634 միավոր (408.08 հա), որից Երևանում՝ 522 միավոր (28.61 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 1533 միավոր (164.72 հա), որից Երևանում՝ 424 միավոր (56.97 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 174 միավոր (71.18 հա), որից Երևանում՝ 35 միավոր (5.62 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 78 միավոր (26.64 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 292 միավոր (11.21 հա), որից Երևանում՝ 2 միավոր (1.39 հա),
- ջրային հող՝ 17 միավոր (32.71 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականին հանրապետությունում օտարված հողերից 13327 միավորի (6721.85 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 790 միավոր (78.60 հա), նվիրատվության գործարք՝ 3061 միավոր (1431.12 հա), որից Երևանում՝ 176 միավոր (17.95 հա) և փոխանակության գործարք՝ 142 միավոր (44.96 հա), որից Երևանում՝ 74 միավոր (10.77 հա):

Հանրապետությունում 2016 թվականին հողերի առուվաճառքի գործարքների քանակը, 2015 թվականի համեմատ, նվազել է 13.8 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 15.6 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 7.6 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 6.5 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 1261.92 հա, որից 1235.16 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.9%-ը կամ 3186 գործարք (1265.01 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 259 միավոր (10.25 հա), իսկ 75.3 %-ը կամ 10037 միավորը (4892.84 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 523 միավոր (68.16 հա): 2016 թվականին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 104 գործարք (564.00 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2016 թվականին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		Հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		Հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	
Երևան	0	0.00	11	0.97	106	4.30	142	4.99	40	11.05	22	4.42	291	16.35	169	34.94
Արագածոտն	223	198.28	10	1.09	33	0.96	81	3.59	647	551.18	3	0.02	231	44.77	13	1.08
Արարատ	174	233.24	7	1.11	130	7.09	49	2.51	924	561.40	4	4.05	440	38.95	49	1.17
Արմավիր	59	61.58	8	0.80	10	0.24	23	0.35	850	825.59	7	1.44	520	51.82	33	0.80
Գեղարքունիք	43	85.10	13	11.78	39	3.06	140	16.12	549	296.56	8	0.69	275	31.88	25	2.43
Լոռի	21	14.86	13	1.25	64	1.26	78	6.06	1422	700.34	4	0.24	90	7.80	41	5.99
Կոտայք	181	245.45	6	10.65	355	10.69	96	3.78	1085	732.59	5	1.73	581	48.92	74	13.64
Շիրակ	148	49.18	4	3.55	62	3.16	60	3.18	464	351.30	6	0.45	83	8.78	26	1.44
Սյունիք	76	78.31	12	1.94	54	2.15	24	4.17	415	282.54	0	0.00	119	10.09	25	0.92
Վայոց ձոր	101	104.78	0	0.00	9	0.35	20	0.35	220	163.98	0	0.00	41	4.61	15	0.38
Տավուշ	48	63.36	7	1.39	72	4.73	66	2.10	107	58.47	5	0.39	66	5.61	13	1.05
Ընդամենը	1074	1134.14	91	34.53	934	37.99	779	47.20	6723	4535.00	64	13.43	2737	269.58	483	63.84

Ստորև ներկայացվում է 2016 թվականին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի		Հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	140	3.82	10	0.95	75	1.54	55	1.33	119	6.43	0	0.00	1	0.01	31	2.76	87	3.66
Արագածոտն	41	2.02	0	0.00	4	0.26	37	1.76	202	160.91	119	157.28	10	1.09	29	0.71	44	1.83
Արարատ	15	0.29	0	0.00	7	0.21	8	0.08	341	233.61	170	223.19	7	1.11	123	6.88	41	2.43
Արմավիր	12	0.26	0	0.00	5	0.06	7	0.20	83	59.34	54	58.22	8	0.80	5	0.18	16	0.14
Գեղարքունիք	44	10.80	3	9.68	11	0.52	30	0.60	190	105.23	42	85.07	10	2.10	28	2.54	110	15.52
Լոռի	49	0.365	1	0.005	25	0.19	23	0.17	127	23.07	21	14.86	12	1.25	39	1.07	55	5.89
Կոտայք	196	1.56	0	0.00	190	1.17	6	0.39	440	267.35	179	243.78	6	10.65	165	9.52	90	3.40
Շիրակ	73	5.52	2	0.38	25	2.18	46	2.96	63	16.96	10	12.60	2	3.17	37	0.98	14	0.21
Սյունիք	34	0.70	1	0.03	26	0.25	7	0.42	126	84.32	70	76.76	11	1.91	28	1.90	17	3.75
Վայոց ձոր	7	0.11	0	0.00	1	0.03	6	0.08	123	105.37	101	104.78	0	0.00	8	0.32	14	0.27
Տավուշ	18	0.57	0	0.00	12	0.47	6	0.10	172	70.30	45	62.64	7	1.39	60	4.26	60	2.01
Ընդամենը	629	26.02	17	11.05	381	6.88	231	8.09	1986	1132.89	811	1039.18	74	23.48	553	31.12	548	39.11

Հանրապետությունում 2016 թվականին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 263 գործարք (94.96 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականին հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը, 2015 թվականի համեմատ, նվազել է 13.4 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 4.8 %-ով, իսկ մարզերում՝ 13.9 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքի քանակը նվազել է 4.4 %-ով, բնակելի կառուցապատման

(տնամերձ) հողերի նկատմամբ՝ 27.0 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 14.4 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 10.8 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2016 թվականին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մտավաճուրդային	Միջին			Նվազագույն	Մտավաճուրդային	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	94	116.33	40.3	4498.3	422.3	341	267.87	365.0	12000.0	3430.6
Ապարան	4	1.66	70.1	3743.3	1006.0	31	18.95	86.5	2727.3	635.1
Թալին	18	38.91	37.9	450.0	191.4	192	123.83	93.6	5494.5	742.2
Ծաղկահովիտ	3	0.38	517.8	3410.5	1965.3	71	138.95	79.5	1000.0	392.9
Արարատի մարզ										
Արտաշատ	81	40.40	68.4	36316.8	1558.1	378	145.25	335.1	10833.3	2699.3
Մասիս	22	57.86	59.5	1866.4	422.2	207	108.06	200.0	11904.8	3296.3
Վեդի	67	124.93	45.0	18333.3	456.0	316	299.43	207.0	10795.1	1983.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	9	4.63	63.0	1058.4	326.7	388	262.29	294.3	9090.0	1362.6
Բաղրամյան	13	11.82	70.9	1478.9	163.4	135	380.19	90.6	2561.1	908.5
Վաղարշապատ	32	41.78	29.0	1682.5	218.3	302	169.58	444.4	11764.7	1966.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	12	19.16	163.5	4900.0	1209.5	380	110.48	199.8	1875.0	503.3
Ճամբարակ	1	7.00	168.7	168.7	168.7	9	2.97	60.5	953.3	351.5
Մարտունի	5	4.39	17.8	381.1	80.9	42	12.24	51.1	2850.0	776.7
Սևան	11	10.32	180.0	1221.0	631.6	51	29.58	52.2	2134.8	355.4
Վարդենիս	13	44.20	115.4	885.6	363.0	67	141.29	41.2	2575.1	392.3
Լոռու մարզ										
Ալավերդի	9	1.53	670.7	2561.8	1943.3	60	34.02	170.4	6424.2	565.4
Գուգարք	6	3.68	170.0	1456.2	548.3	70	21.05	234.6	6065.9	814.5
Սպիտակ						14	3.96	250.0	5555.5	675.0
Ստեփանավան	1	1.02	123.9	123.9	123.9	61	46.30	90.6	1686.6	412.3
Տաշիր	5	8.63	168.1	552.0	357.7	1188	562.34	45.3	1384.4	185.2
Կոտայքի մարզ										
Արույան	90	139.97	68.5	5833.3	597.9	267	210.92	279.3	11942.7	3986.9
Եղվարդ	66	84.95	44.6	5712.6	546.7	672	440.83	174.4	11971.8	2534.9
Հրազդան	23	18.85	85.4	1108.0	362.2	124	68.66	130.5	10256.4	1008.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	8.47	103.5	514.7	273.5	152	113.39	252.0	1693.1	661.3
Ամասիա	1	1.08	295.3	295.3	295.3	11	19.86	40.9	261.0	138.1
Անի	2	1.28	93.0	294.7	193.9	142	105.68	110.6	546.9	457.4
Աշոցք						18	19.12	58.5	215.8	138.9
Արթիկ	3	1.77	726.1	828.0	785.5	133	91.65	79.4	1428.6	523.1
Սյունիքի մարզ										
Գորիս	2	0.86	162.8	1000.0	581.4	54	54.52	92.6	1023.2	771.0
Կապան	15	12.95	77.0	931.9	301.5	150	87.64	120.0	841.6	443.5
Մեղրի	49	61.43	37.1	1246.3	324.3	84	27.45	193.0	3000.0	804.3
Սիսիան	4	1.52	133.9	1550.0	608.0	125	112.67	46.3	1977.4	580.4

Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	60	64.64	21.7	1156.4	240.5	133	86.49	125.0	10000.0	1756.8
Վայք	41	40.14	16.7	704.0	161.1	87	77.49	58.8	1430.7	602.7
Տավուշի մարզ										
Բերդ						55	16.91	213.3	3783.8	690.5
Իջևան	34	61.04	43.7	3240.0	1112.7	31	29.01	267.5	9454.5	1532.6
Նոյեմբերյան	11	1.60	150.5	5806.9	2434.3	21	12.56	46.7	7368.4	982.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2016 թվականին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	23	4207.1	421.7	5714.3	3504.4	169	346101.5	130.7	22200.0	2590.7
Ապարան	4	1312.2	122.1	553.0	358.0	28	36072.5	124.1	609.6	389.7
Թային	2	1537.0	77.4	292.5	185.0	24	38042.3	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						10	27526.0	60.0	214.3	93.9
Արարատի մարզ										
Արտաշատ	34	29441.6	253.3	6068.5	830.5	119	132114.2	173.9	7140.3	905.0
Մասիս	53	21195.9	535.3	4011.4	2673.0	225	156372.9	187.5	25000.0	1210.0
Վեդի	36	18145.3	664.3	3000.0	962.7	91	96035.6	126.1	5000.0	663.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	840.4	555.0	3528.0	2784.7	196	209675.7	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան						15	18636.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	984.0	554.9	1304.0	929.5	298	275348.0	197.4	26528.4	1530.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	3	6679.0	192.5	850.5	521.5	33	31923.7	186.6	1084.3	683.7
Ճամբարակ						7	4679.0	71.3	2286.2	146.9
Մարտունի	10	9221.0	112.6	404.9	251.2	199	219657.7	119.3	5000.0	281.1
Սևան	11	3339.1	410.5	1805.7	1185.6	10	11034.9	240.0	3110.4	342.1
Վարդենիս	4	6179.3	38.5	1200.0	609.6	26	51543.0	72.5	987.2	150.6
Լոռու մարզ										
Ալավերդի	17	2755.0	225.0	3337.0	1982.0	30	29545.6	114.3	1388.9	217.0
Գուգարք	18	5219.2	160.7	5843.3	2040.0	33	23263.1	77.9	14083.3	1259.6
Սպիտակ	1	605.1	736.2	736.2	736.2	9	10150.0	104.9	1348.3	199.7
Ստեփանավան	1	1177.6	173.2	173.2	173.2	14	11988.9	88.2	1666.7	175.7
Տաշիր	2	942.7	316.5	400.0	358.3	2	2000.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	115	56638.8	352.9	5672.6	3406.2	272	216568.0	264.5	35353.5	1952.4
Եղվարդ	35	33304.0	204.2	4976.4	1877.9	254	221326.4	173.6	27000.0	2856.0
Հրազդան	15	5241.6	278.3	4976.4	2379.5	49	45638.0	117.7	34848.5	1318.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	23	6421.5	244.9	10500.0	4222.9	30	29062.3	113.6	18750.0	333.7
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	4	1231.5	443.7	1797.8	792.9	22	35481.0	67.9	180.6	210.3
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	10	2172.0	580.8	3392.9	2317.7	28	22742.3	111.8	5000.0	217.8

Սյունիքի մարզ										
Գորիս	4	1939.0	230.0	230.0	230.0	16	15182.0	112.2	1700.0	366.7
Կապան	14	9355.0	110.4	2600.0	1344.0	13	13340.5	67.9	2638.9	358.5
Մեղրի	7	5713.1	100.8	607.4	305.8	24	18600.4	68.5	632.9	269.9
Սիսիան	3	2000.0	554.4	580.8	572.0	66	53798.9	123.5	875.0	254.4
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	3057.7	244.3	1655.9	722.4	36	42077.0	96.7	7659.6	507.0
Վայք	4	174.3	1050.0	1068.7	1054.7	5	3996.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						6	5773.4	75.8	810.0	126.8
Իջևան	32	15782.5	159.5	3000.0	1518.2	52	43224.4	74.1	14423.1	510.9
Նոյեմբերյան	28	26863.7	110.0	1100.4	568.5	7	6090.8	125.0	1948.1	253.5

2016 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7568 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.4 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 79.7 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից: 2016 թվականին անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2015 թվականի համեմատ, աճել է 6.0 %-ով:

2016 թվականին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 475 բնակարանի, 583 անհատական բնակելի տան, 3577 հասարակական նշանակության, 774 արտադրական նշանակության օբյեկտի, 2020 հողի, 136 ավտոտնակի և 3 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 62 վարձակալության գործարքների քանակը 2015 թվականի համեմատ նվազել է 25.3%-ով:

2016 թվականին հանրապետությունում վարձակալված 9203.24 հա հողերից 11.38 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 9191.86 հա հողերից 8448.90 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 592.41 հա արդյունաբերական օբյեկտների, 3.15 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 4755.18 հա, որից 4308.82 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 21438 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.4 %-ը: 2016 թվականին գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի համեմատ, աճել է 20.4 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (49.5 %), առանձնատների (20.8), հասարակական նշանակության օբյեկտների (10.9 %) և հողերի (12.9 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11367 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի համեմատ, աճել է 16.1 %-ով:

2016 թվականին հանրապետությունում գրավադրվել է 19535.00 հա մակերեսով հող, որից 51.91 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 25.2 %-ը կամ 4914.30 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 3.35 հա: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Սյունիքի մարզում՝ 12272.98 հա, որից 21.21 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2016 թվականին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 1712 գործարք, որից 1158-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 79.9 %-ն իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 12.9 %-ն՝ անհատական բնակելի տների, 3.4 %-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.9 %՝ արտադրական նշանակության օբյեկտների, 0.6 %՝ ամառանոցների, 0.5 %-ն՝ ավտոտնակների և 1.8 %-ը՝ հողերի, այդ թվում 0.9 %-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: 2015 թվականի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 17.2 %-ով, ընդ, որում Երևան քաղաքում՝ 13.1 %-ով, իսկ մարզերում՝ 26.8 %-ով:

2016 թվականին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 22349 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2015 թվականին համեմատ աճել է 4.0 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.9 %, իսկ քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (24.8 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե